ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Սեպտեմբերի 25-ին, չորեքշաբթի օրը, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի եղբայրական հրավերով, Մայր Աթոռ Ս. Էջմիածին ժամանեց Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Նորին Սրբություն Ալեքսին:

Սրբազան Պատրիարք Հոր ուղեկցում էին գավազանակիր հոգեշնորհ Տ. Պղատոն աբեղան և Պատրիարքարանի գործերի կառավարիչ պր. Դանիել Անդրեևիչ Օստապովը:

Երևանի օդանավակայանում Նորին Սրբություն Ալեքսի Պատրիարքին դիմավորեց Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը՝ ի գլուխ Մայր Աթոռի միաբանության:

Սրբազան Հյուրին դիմավորեց նաև Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պր. Կ. Դալլաքյանը:

Մայր Տաճարում, Փրկչի Իջման Ս. Սեղանի առաջ, երկու Հայրապետները միատեղ աղոթեցին Ս. Եկեղեցու հաստատության և աշխարհի խաղաղության համար:

Սեպտեմբերի 26-ին, հինգշաբթի, Հայկական ՍՍՌ Գերագույն սովետի նախագահության նախագահ Նագուշ Հարությունյանն ընդունեց Նորին Սրբություն Ալեքսի Պատրիարքին և Նորին Սրբություն Վազգեն Ա Վեհափառ Հայրապետին, որոնց հետ տեղի ունեցավ ջերմ և սիրալիր զրույց:

Սեպտեմբերի 27-ին, ուրբաթ երեկոյան, Նորին Սրբություն Ալեքսի Պատրիարքը հրաժեշտ առավ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետից և միաբանությունից ու մեկնեց Մոսկվա:

28 սեպտեմբերի 1963 թ.
ԷՋՄԻԱԾԻՆ

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ